

2010 Մ. 3 ԹԻՎ 17-18 Թեհրանում կայացած զինաթափման եւ  
զանգվածային ոչնչացման չտարածման միջազգային  
համաժողովի ամփոփում

(Ոչ պաշտոնական թարգմանություն)

Թեհրանում տեղի ունեցած զինաթափման եւ զանգվածային ոչնչացման զենքերի (ՉՈՉ) չտարածման միջազգային համաժողովի ամփոփման ժամանակ խիստ մտահոգություն արտահայտվեց որոշ միջուկային տերությունների կողմից երկակի ստանդարտների եւ խտրական մոտեցումների կիրառման, մասնավորապես NPT-ին չանդամակցող երկրների հետ որոշ երկրների համագործակցության եւ սիոնիստական վարչակարգի միջուկային զինանոցի անտեսման հետեւանքով չտարածման ռեժիմի թուլացման կապակցությամբ:

«Միջուկային էներգիան բոլորի համար, միջուկային զենքը՝ ոչ ոգու» կարգախոսով զինաթափման եւ ՉՈՉ չտարածման միջազգային համաժողովը տեղի ունեցավ ս. թ. ապրիլի 17-ին եւ 18-ին Թեհրանում:

Այդ համաժողովում իրենց մասնակցությունը բերեցին աշխարհի 60 երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ եւ անվանի փորձագետներ, որոնք քննարկեցին ու մտքեր փոխանակեցին զինաթափման եւ ՉՈՉ, հատկապես միջուկային զենքերի հետ կապված մտահոգությունների եւ մարտահրավերների շուրջ:

Նկատի ունենալով մասնակիցների հայտարարությունները եւ ներկայացված տեսակետները, համաժողովը

1. խորը մտահոգություն հայտնեց զինաթափման եւ միջազգային անվտանգության բնագավառում առկա բարդ իրավիճակի, ինչպես նաեւ զանգվածային ոչնչացման եւ հատկապես միջուկային զենքերի գոյության հարատեւման եւ այդ զենքերի օգտագործման կամ օգտագործման սպառնալիքի կապակցությամբ:
2. շեշտեց զինաթափման խնդրի կարելիությունը՝ որպես համաշխարհային հանրության կարելորագույն առաջնահերթություն, հակամարդկային զենքերի ամբողջական ոչնչացումը հստակ ժամանակացույցի ընթացքում, միջուկային զենքերի չտարածման պայմանագրի հիման վրա միջուկային երկրների զինաթափման պարտավորությունների կատարումը, 1995 եւ 2000 թվականների վերանայման համաժողովների ամփոփիչ արձանագրությունները եւ միջուկային տերությունների կողմից ստանձնած՝ զինաթափման ուղղությամբ 13 քայլերի ամբողջական իրականացումը:

3. ընդգծեց միջուկային զինաթափման ճանապարհին առկա փակուղային իրավիճակը հաղթահարելու ուղղությամբ առավել ջանքեր գործադրելու եւ միջուկային զինաթափման ու չտարածման հարցում համակողմանի մոտեցումների մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը:
4. շեշտեց համապարփակ, խտրականությունից զերծ եւ իրավական տեսանկյունից պարտավորեցնող կոնվենցիայի կնքման անհրաժեշտությունը՝ միջուկային զենքերից զերծ աշխարհ ստեղծելու նպատակով այդ զենքերի տարածման, արտադրման, տեղափոխման, պահեստավորման, օգտագործման կամ օգտագործման սպառնալիքի ամբողջական արգելման նպատակով՝ նկատի ունենալով 1992թ. քիմիական զենքերի երկու կոնվենցիաների կնքման փորձը, 1972թ. կենսաբանական զենքերի արգելման կոնվենցիան, ինչպես նաեւ անվտանգության՝ համապարփակ ու ոչ խտրական երաշխիքների տրամադրումը մինչեւ միջուկային ամբողջական զինաթափման հասնելը:
5. ընդգծեց ՄԱԿ համապատասխան բանաձեւերի հիման վրա աշխարհի տարբեր տարածաշրջաններում եւ մասնավորապես Միջին Արեւելքում միջուկային զենքերից զերծ տարածք ձեւավորելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, իսկ մինչ այդ, որպես առաջին քայլ սիոնիստական վարչակարգի՝ միջուկային զենքերի չտարածման պայմանագրին միանալու եւ այդ վարչակարգի միջուկային օբյեկտները Ատոմային Էներգիայի Միջազգային Գործակալության (ԱԷՄԳ) վերահսկողության տակ դնելու անհրաժեշտությունը:
6. շեշտեց միջուկային զենքերի կրճատման ուղղությամբ միջազգային ասպարեզում երկկողմ եւ բազմակողմ համաձայնությունների կատարման անվերադարձության, թափանցիկության եւ դրանց՝ իրականությանը համապատասխանության սկզբունքները:
7. ընդգծեց խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման եւ միջազգային համագործակցության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը՝ միջուկային զենքերի չտարածման պայմանագրի եւ այդ պայմանագրում չորրորդ հոդվածում նշված պարտավորությունների հիման վրա:
8. շեշտեց, որ հաշվի առնելով, որ խաղաղ նպատակներին միտված միջուկային օբյեկտների

վրա հարձակումը ունի զգալի բացասական ազդեցություններ մարդկանց եւ շրջակա միջավայրի վրա, նման հարձակումը խոսում է միջազգային իրավունքի եւ ՄԱԿ խարտիայի ակնհայտ խախտման մասին:

9. հայտնեց իր խիստ մտահոգությունը՝ որոշ միջուկային տերությունների կողմից երկակի ստանդարտների եւ խտրական մոտեցումների կիրառման, մասնավորապես NPT-ին չանդամակցող երկրների հետ որոշ երկրների համագործակցության եւ սիոնիստական վարչակարգի միջուկային զինանոցի անտեսման հետեւանքով չտարածման ռեժիմի թուլացման վերաբերյալ:
10. շեշտվեց՝ մինչեւ որոշված ժամկետը (2012թ.) մյուս զանգվածային ոչնչացման զենքերի, այսինքն քիմիական եւ կենսաբանական զենքերի ոչնչացմանը վերաբերող պարտավորություններին հավատարիմ մնալու, ինչպես նաեւ կենսաբանական անդրադառնալու անհրաժեշտությունը:
11. նկատի ունենալով համաժողովի կարելիությունը եւ դրանից գոյացած արդյունքները, որպես հյուրընկալող երկիր առաջարկում ենք, որպեսզի համաժողովի արդյունքները իբրեւ փաստաթուղթ ներկայացվեն եւ արձանագրվեն ՄԱԿ գլխավոր քարտուղարի եւ միջազգային այլ կազմակերպությունների կողմից:
12. նկատի ունենալով մասնակիցների կողմից համաժողովի թեմաների ողջունումը, ինչպես նաեւ համաժողովի նպատակների առաջխաղացման քննարկման նպատակով եւ հաշվի առնելով մեծ թվով մասնակիցների ցանկությունը, զինաթափման եւ միջազգային անվտանգության երկրորդ համաժողովը տեղի կունենա 2011թ. ապրիլ երկրորդ կեսին Թեհրանում: